# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք, ՀՀ, Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 025560412, 094041458, geghasar.lori@mta.gov.am

N 126
*25 դեկտեմբեր 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ղեկավարի թիվ 26-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Մերոբյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 025560412 , 094041458, geghasar.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 26-Ա

## ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների 10.06.2008թ, 27.04.2010թ ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.08.2010թ 1004-Ն որոշումով և հիմք ընդունելով <Արտյոմ Սաքանյան> ԱՁ -ի կողմից կազմված հատակագիծը և հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից ընդունված 20.05.1991թ թիվ 8/9 որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայականը և հարգելով համայնքի բնակիչ Մաքսիմ Վարդանյանի և մյուսների 14.12.2017թվականի դիմում խնդրանքը, այն մասին որ Գեղասար համայնքում 0025-0014 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասի վրա հանգուցյալ Հայստան Վարդանյանի և մյուս անդամների կողմից 1991թվականին կառուցվել է բնակելի տուն և օժանդակ շինություն՝անասնագոմ , սակայնպետական գրանցում չեն ստացել կառուցման համար, անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով և հաշվառվել են որպես ինքնակամ կառույց : Նկատի ունենալով , որ տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի, որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում: ՈՐՈՇԵՑԻ

1. Օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Մաքսիմ , Ռոստոմ Վարդանյանների և Գոհարիկ Ֆիդանյանի /նույն ինքը Գոհարիկ Վարդանյան/ համատեղ սեփականության իրավունքը Գեղասար համայնքում 0025-0014 ծածկագրի տակ գտնվող, 0,2397հա տնամերձ հողամասի և նրա վրա 1991թվականին կառուցված 95,39քմ մակերեսով բնակելի տան, 42,66քմ նկուղի, 4,29քմ աստիճանահարթակի 28,01քմ անասնագոմի նկատմամբ:

2. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը որպես հիմք վերը նշված գույքերին պետական գրանցում տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ